ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/68

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.02.2022թ. թիվ 26/26-1/2440-2022 գրությամբ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի 02.02.2022թ. թիվ 23/07-23/2198 գրության հիման վրա, 11.02.2022թ. թիվ 26/26-1/2440-2022 գրությամբ նախաձեռնել է «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/68 ընթացակարգի շրջանակներում 21.02.2022թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.02.2022թ. թիվ 23/07-23/2198 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35 ծածկագրով գնման ընթացակարգին, որպես գնման արդյունքում ընտրված մասնակից Երևանի քաղաքապետարանի և «Արմինժ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի հուլիսի 14-ին կնքվել է հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2 կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր /այսուհետ՝ նաև Պայմանագիր/, որի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների թեքահարթակների կառուցման աշխատանքները /այսուհետ՝ նաև աշխատանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շնարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա/ Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ/ Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը /ներառյալ օրացուցային գրաֆիկը/,

գ/ Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ/ Կապալառուի կողմից խախտվել է պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Տեղեկացնում եմ, որ 2022 թվականի հունվարի 20-ին «Արմինժ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներկայացվել է պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցում և Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետը, միակողմանի լուծել է ընկերության հետ 2021 թվականի հուլիսի 14-ին կնքված հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2 կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիրը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ՝ խնդրում եմ «Արմինժ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց:

Կից ներկայացվում են Երևանի քաղաքապետարանի և «Արմինժ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի հուլիսի 14-ին կնքված հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2 կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի, նշված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցման, տուժանքի մասին 2021 թվականի թվականի հուլիսի 14-ին կնքված հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2 համաձայնագրերի, դրան կից վճարման հանձնարարագրերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/68 ընթացակարգի շրջանակներում 21.02.2022թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 14.07.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների վարչական շրջանների թեքահարթակների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ օրացուցային գրաֆիկով, պայմանագրով նախատեսված աշխատանքերի կատարման համար սահմանվել է հետևյալ ժամկետը. «սկիզբ՝ պայմանագիրը օրենքով սահմանված ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից, ավարտը՝ Կենտրոն վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքների դեպքում՝ 01.11.2021թ., Շենգավիթ վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքների դեպքում՝ 60 օրացուցային օր»:

3. Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմը:

4. Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Արտակ Համլետի Մարտիրոսյանի միջև 01.07.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/31» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Էրեբունի, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների կողմից ներկայացված թեքահարթակների կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

5. Պատվիրատուն «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 20.01.2022թ. թիվ 23/07-23/1230 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 14.07.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների վարչական շրջանների թեքահարթակների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը /ներառյալ օրացուցային գրաֆիկը/, կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագշանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին, կապալառուի կողմից խախտվել է պայմանագրի 3.1.3 կետով

նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չեն կատարվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4 կետով միակողմանի լուծում է «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի հետ 2021 թվականի հուլիսի 14-ին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2» կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիրը»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 31.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.02.2022թ. թիվ 26/26-1/2440-2022 գրությունը, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի 02.02.2022թ. թիվ 23/07-23/2198 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 14.07.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների վարչական շրջանների թեքահարթակների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ օրացուցային գրաֆիկով, պայմանագրով նախատեսված աշխատանքերի կատարման համար սահմանվել է հետևյալ ժամկետը. «սկիզբ՝ պայմանագիրը օրենքով սահմանված ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից, ավարտը՝ Կենտրոն վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքների դեպքում՝ 01.11.2021թ., Շենգավիթ վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքների դեպքում՝ 60 օրացուցային օր»:

Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմը:

Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Արտակ Համլետի Մարտիրոսյանի միջև 01.07.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/31» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Էրեբունի, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների կողմից ներկայացված թեքահարթակների կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պատվիրատուն «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 20.01.2022թ. թիվ 23/07-23/1230 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 14.07.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Կենտրոն և Շենգավիթ

վարչական շրջանների վարչական շրջանների թեքահարթակների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը /ներառյալ օրացուցային գրաֆիկը/, կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագշանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին, կապալառուի կողմից խախտվել է պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չեն կատարվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4 կետով միակողմանի լուծում է «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի հետ 2021 թվականի հուլիսի 14-ին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2» կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիրը»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 31.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 3.1-րդ կետի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է իր և Երևանի քաղաքապետարանի միջև 14.07.2021թ. կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.02.2022թ. թիվ 26/26-1/2440-2022 գրությամբ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**